HAÏ ARI

ՀԱՅ ԱՐԻ

ՕՐԳԱՆ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ
ORGANE DES SCOUTS ARMÉNIENS EN FRANCE

Ա. ՏԱՐԻ Թիւ 3 | 1929 | 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ
1e ANNÉE No 3 | 1929 | 1 DECEMBRE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ .... Գ. Մեծատուրեան
ՍԱՐՔ ՍԱՆԻԷ .... Գ. Մ.
ԽՈՒՄԲԸ .... Ծիրապես
ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ՕՃԱԽԸ .... Հ. Դերձակեան
ԵՐԷՑՆԵՐՈՒՆ ԲԱԺԻՆԸ .... Վիգէն Զաւարեան
ՀԱՃԵԼԻ ԲԱՆԱԿՈՒՄ ՄԸ .... Վ. Տէր Դաւթեան
ԺՊՏԻՆՔ .... Ե. Օտապաշեան
ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ .... ՀայԱրի
ԱՆԳԼ. ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ՀԱՅ ԱՐԻՆԵՐԸ ...
Միութեան կեանքը
Պաշտօնական

Գինն է 2.50 ֆրանք

digitised by A.R.A.R.@

HAÏ ARI

REVUE MENSUELLE

ORGANE DE L'ASSOCIATION DES SCOUTS ARMÉNIENS

RECONNUE PAR LE BUREAU INTERNATIONALE DE SCOUTISME

Directeur Kourkène Medzadourian

ՀԱՅ ԱՐԻ

ՕՐԳԱՆ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ

Կը հրատարակուի ամիսը մէկ անգամ խմբագրական մարմնի մը կողմէ

Ցօղուած և դրամական առաքումներ ընել հետևեալ հասցէին

ԳՈՒՐԳԷՆ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ

3 Rué Gustave Tricard

BAGNEUX (SEINE) FRANCE

Բաժանորդագրութեան պայմաններ

Ֆրանսա, Սուրիա եւ Պալքաններ	Տարեկան	25 Ֆրանք
Ուրիշ երկիրներ	«	2 տոլար

Հատը ձեռքէ կը ծախուի 2,50 Ֆրանք



Ա. Տարի Թիւ 3	ԱՄՍԱԳԻՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ	1 Դեկտեմբեր 1929

ՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ

ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Նախորդ ամսուան մէջ առիթ ունեցայ այցելելու մեր գաւառի խումբերը եւ մասնակցիլ անոնց կազմակերպած հաւաքոյթներուն։ Անձնական շփումները լաւագոյն գրաւականներն են, իրերահասկացողութեան համար, եւ ինծ համար մեծ ուրախութիւն եղաւ տեսնել որ ըլլայ Փարիզ, ըլլայ գաւառ, ամէն տեղ մեր միութեան իտէալը միեւնոյնն է։

Տեսայ մեր բոլոր խմբապետներն ու խմբապետուհիները, որոնք մանրամասնօրէն տեղեկացուցին ինծ իրենց խումբերու մասին։ Հիացայ նկատելով որ բոլոր ձեռք բերուած յաջողութիւնները իրենց [illegible] կամքին եւ մեծ աշխատութեան արդիւնքներն են։ Ինչպէս Փարիզը՝ անոնք ալ պայքարած են ամէն տեսակի հակառակորդներու դէմ, եւ հակառակ այս բոլորին մեր տղոց թիւը շատցած է եւ մեծ փոփոխութիւն կայ դէպի լաւը։

Տեսայ նաեւ մեր սկաուտներու եւ գայլիկներու ծնողները։ Անոնք գիտակից են սկաուտութեան օգուտներուն եւ մեծ վստահութեամբ է որ կը դրկեն իրենց տղաքը դէպի մեր շարքերը։ Մեծ սիրով յիշեցի Ռօմանի այն սիրալիր եւ խեղճ մայրը որ իր զաւակները իր աշխատանքով կը մեծցնէ. «Իմ զաւակս ալ տարէք ձեզ հետ. կ'ուզեմ որ հայ մեծնայ եւ սիրէ իր ազգը։

digitised by A.R.A.R.@

ԳԱՅԼԻԿՆԵՐԸ

Գաւառի այցելութիւններուս ամենագեղեցիկ տպաւորութիւնս մեր Վաշանի գայլիկներն են: Պէտք էր տեսնել թէ անոնք որքան աշխոյժ են եւ կարգապահ. Իրենց համաչափ երգերն ու խաղերը խիստ տպաւորիչ էին: Իսկ երբ կ'երգեն «Մեր Հայրենիք»ը այլեւս չեն հետեւիր իրենց խմբապետուհիին չափերուն, անոնք կ'ուռեցնեն իրենց կուրծքերը, կը նային բարձր եւ բոլոր սրտով կ'երգեն.

Նայիր նրա երեք գոյնով
Նուիրական մեր նշան:

եւ «Մեր Հայրենիք»ը անոնց ներդաշնակն էր, որ երգուեցաւ միւս երգերէն, որովհետեւ միայն զգացումն էր որ կը տիրէր հոն:

Ապրիք գայլիկներ. մեծցէք, շուտ մեծցէք:

ԲՐԻՎԱ

Երբ Վաշանի եւ Ռօմանի խմբապետական կազմով Բրիվա կ'երթայինք, երբեք չէինք սպասեր որ հոն այդքան գիտակից տղոց պիտի հանդիպինք: Նոր ստեղծուած էր մեր տղոց մասնաճիւղ մը եւ քիչ մը տարակոյսով կ'երթայինք հոն ուր հազիւ մէկ երկու հարիւր հայեր կ'աշխատին: Բայց որքա՛ն սխալած էինք...

Երբեք կարելի չէ մոռնալ այն խանդավառ հաւաքոյթը որ մենք հոն ունեցանք: Սկաուտները եւ գայլիկները մեզ կ'սպասէին. գեղեցիկ օր մը ապրեցանք, աւելի ամրացուցինք այդ մասնաճիւղին հիմերը: Գեղեցիկ հայ գաղութ մը կար հոն: Մերինները կ'աշխատին լաւ պայմաններու մէջ: Գործատանատէրը սրահ մը շինել տուած է հայերու համար, ուր կը ծածանի հայ դրօշը: Շատ բան կ'սպասենք մեր տղոցմէ. չէ՞ մի որ ֆրանսացի գործատանատէրն անգամ, որ մեզ այնքան սիրով ընդունեց, կ'ըսէր խօսքը ուղղելով Բրիվայի հայ պատանիներուն.

«Ինչի՞ կ'սպասէք սկաուտ արձանագրուելու համար. իմիններս երեքն ալ սկաուտ են Լիօնի մէջ...:

ԿԱՄՔ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ

Շարունակեցէք այդպէս, դուք գիտակից պետեր եւ դուք սկաուտներ ու գայլուկներ: Գիտցէք որ կամքին եւ աշխատանքին առջեւ կ'ոչնչանան ամենամեծ դժուարութիւնները անգամ: Ձեր աշխատանքը մեր լաւագոյն ուժն է եւ ապագայ աւելի մեծ յաջողութեանց մեծ յոյսը: Աշխատինք գիտակցօրէն եւ բուռն թափով, հայ պատանեկութեան համար եւ մեր բոլոր ճիգերը. աշխատինք մեր դժբախտ ցեղին միակ յոյսին համար:

ԳՈՒՐԳԷՆ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆ



ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

ՄԱՐՔ ՍԱՆԻԷ

Առաջին անգամ հանդիպեցանք իրեն 1926ի միջազգային խաղաղասիրական համաժողովին, ուր աշխարհի չորս կողմերէն հաւաքուած 6,000 պատուիրակներ իրենց հաւաքոյթը կ'ունենային:

Հոն ճանչցանք զինք: Մեր սկաուտները սիրուեցան իրմէ:

Այդ թուականէն ի վեր Մարք Սանիէ ամէն առթիւ քաջալերած է մեզ: Ներկայ եղած է մեր բոլոր հանդէսներուն, հրաւիրած է մեզ իր Պիէռվիլի դղեակը բանակելու և կամ մասնակցելու իր կազմակերպած հաւաքոյթներուն:

Ինք հետեւած է մեր բոլոր ճիգերուն և վերջերս երբ քաջալերանք մեզ նուիրած է գետիններ և շէնք իր դղեակին մօտ որպէս զի կառուցանենք «հայ սկաուտներուն օճախը». «Ձեր բարեկամները քիչ են, որովհետև անկեղծ էք. իսկ անոնք որ բարեկամ են ձեզ, ձեզ հետ են մինչեւ վերջ:»

Այս խօսքերով է որ մեզի տուաւ բարեկամութեան այս ապացոյցը:

Յիշենք որ Մարք Սանիէ ֆրանսացի ամենամեծ հռետորներէն մին է:

Ինքը գնդապետ էր պատերազմական շրջանին: Երկար տարիներ եղած է Փարիզի երեսփոխան և Պոասիի Քաղաքապետ: Վերջապէս անդամ է «Մարդկային իրաւունքի Լիկային վարչութեան, եւայլն:

Տնօրէն է "Լա Ժէօն Ռէփիւպլիք" հանդէսին. և նախագահ խաղաղասէրներու միջազգային կոմիտէին:

Գ. Մ.

digitised by A.R.A.R.@



[illegible]

ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ԹԵՔՆԻՔ ԲԱԺԻՆԸ

[illegible]

ԽՈՒՄԲԸ

Սկաուտական խումբը կը բաղկանայ 7-ական հոգինոց չորս կամ հինգ խմբակներէ. որը կը ղեկավարուի խմբապետի մը կողմէ, օժանդակութեամբ իր փոխ խմբապետին: Խումբը սկաուտական գեղեցիկ ընտանիք մըն է, և բոլոր սկաուտները իրարու կապուած են եղբայրութեան սերտ կապերով:

Ամէն խումբ իր գործունէութեան յայտագիրը կ'ունենայ, որը կը պատրաստուի խմբապետին կողմէ, համաձայն տրըւած ընդհանուր հրահանգներու:

ՁՄԵՌՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Արշաւներ

Խումբի մը ձմեռնային յայտագիրը մեծապէս կը տարբերի ամառուանէն: օդը ցուրտ է և կամ խոնաւ: Կարելի չէ այնչափ երկար արշաւներ կատարել:

Ձմեռուան արշաւները շատ կարճ կ'ըլլան ուրեմն: Այս արշուներու ընթացքին տեղի կ'ունենան մասնաւորապէս տաքցնող խաղեր, օրինակի համար զանազան գնդախաղեր եւ վազքեր. Տղաքը լաւ հագուած պէտք է ըլլան եւ մանաւանդ պէտք է լաւ ուտեն: Դասախօսութիւնները և կամ նուազ շարժում ունեցող մրցումները տեղի կ'ունենան ճիշդ մեծ խաղերէ վերջ, որոնց ընթացքին սկաուտները լաւ տաքցած են:

Ձմեռուան արշաւները պէտք է մասնաւորապէս մեծ խաղերով անցնին, սակայն պէտք չէ անտեսուին սկաուտական դաստիարակութեան միւս ճիւղերը (թեքնիք փորձեր, երգեր, մրցումներ, եւայլն:

Հաւաքումներ

Ձմեռուան հաւաքումները շատ աւելի հետաքրքրական են, որովհետեւ խմբակները ազատ և հանգիստ կերպով կը պատրաստեն իրենց գործունէութեան յայտագիրը: Խմբակները կը հաւաքուին շաբաթը մէկ երեկոյ իրենց հաւաքավայրին մէջ: Պէտք է ամէն հաւաքոյթի համար մասնաւոր յայտագիր մը պատրաստուած ըլլայ կանխաւ: Առաջնորդները կը դասախօսեն խմբապետին կողմէ նշանակուած նիւթերու շուրջ:

Յետոյ տեղի կ'ունենան սենեակի քանի մը խաղեր: Պէտք չէ անտեսել նաև սկաուտական թեքնիքը: (Ա. և Բ. կարգի քննութիւններ և մասնագիտական նշանակներ): Հաւաքումներու ընթացքին կարելի է երգել հաւաքական ձեռային աշխատութիւններով զբաղիլ (գծագրութիւն, փորագրութիւն, հաւաքավայրի աշխատանքներ, եւայլն): Երբ խումբը ձմեռուայ ընթացքին կանոնաւոր կերպով կ'աշխատի և կը պատրաստուի ամառուայ բանակումներուն և զանազան հանդէսներուն: Ամառուայ գործունէութիւնը կ'ըլլայ յաջող եւ օգտակար:

ԽՄԲԱՊԵՏ

Բանակումին օճախը

Թէ ինչպէս կարելի է բանակումին ատեն տան խոհանոցին յարմարութիւններով օժտուած օճախ մը ունենալ:

Անցած ձեմպօրին մեծ ցուցահանդէս մըն էր զանազան ազգերու հնարամտութեան, բանակումի վերաբերեալ շինութեանց համար: Այս շինութեանց մէջ մեծ տեղ



Պատկեր -1-

կը բռնէին խոհանոցները, և մասնաւորաբար օճախները:

Ամէն ազգ նորութիւն մը բերած էր բայց միայն հունգարացիներու օճախն էր ուշադրաւը իր շատ մը յարմարութիւններու և աշխատանքի գեղեցիկ օրինակովը:



Պատկեր -2-

Կը փորձուիմ հակիրճ յօդուածով մը մեր սկաուտներուն բացատրել հունգար սկաուտներու օճախներուն ձևը, որպէս զի յառաջիկայ բանակումներու ընթացքին օգտագործեն զայն:



Պատկեր -3-

Շինութեան ձևը

Հողին մէջ 0,60 մեթր լայնքով և 1,50–3 մեթր երկայնքով (երկայնքը շինուելիք օճախներուն թիւէն կախուած է), և



Պատկեր -4-

digitised by A.R.A.R.@

1,20 մէթր . խորութեամբ փոս մը բանալ. (տես պատկեր 1)։ Յետոյ ձախ կամ աջ կողմի պատը հողին մակերեսէն սկսեալ 0,80 մէթր փորել, փոսին եղերքէն սկսեալ



0,40 մէթր լայնքի վրայ. (տես պատկ. 2)։ Այսպիսով կ՚ունենանք նստարան մը խոհարարին համար։

Անցնինք միւս պատին։ Հողին մակերեսէն 0,15 մ. վար սկսիլ՝ 0,25 բարձրութեամբ, 0,30 լայնքով և 0,20 խորութեամբ փոքրիկ անցք մը բանալ. բնական է որ



այս անցքին վերի եղերքն է որ հողին մակերեսէն 0,17 մ. վար է. (տես պատկ. 3)։

Այս անցքէն վերջ կ՚սկսինք փորել 0,60 մէթր խորութեամբ ուրիշ անցք մը և այս անգամ անոր կուտանք փուռի մը ձեւը. (տես պատկ. 4)։ Յետոյ դուրսի կողմէն մեր ունեցած կաթսայի ստորամասի շրջագծէն քիչ մը աւելի փոքր ծակ մը կը բանանք մեր փուռի գագաթին վրայ, ուր կաթսան պիտի տեղաւորենք. փուռին ետեւէն ալ ծխնելոյզ մ՚ը կը ծակենք, որպէս զի ծուխը անկէ դուրս ելլէ, փոխանակ կաթսային եղերքէն բարձրանալով կերակուրներուն համը և հոտը ուրելու. (տես պատկ. 5)։

Թիւ 6 պատկերը կը ներկայացնէ օճախին հորիզոնական կտրուածքը, տեսնուած վերէն։ Որպէս զի փոսը լաւ տաքնայ կարելի է անոր ներքին մակերեսը կղմինտրի կամ քարի կտորներով ծածկել։ Նոյնպէս օճախը անձրեւէն պաշտպանելու համար կարելի է վրայէն վրան մ՚ը լարել։

Օճախին շինութիւնը աւարտած է։

Այս ձեւին առաւելութիւնն այն է որ տաքութիւնը հաւասար կերպով կը պարնէ կաթսայի յատակին և մէջի կերակուրը շատ դժուարաւ կ՚այրի, ինչ որ միւս պարզ օճախներուն վրայ յաճախադէպ է։ Ծուխը հեռացնելով կերակուրները անոր գէշ համէն զերծ կը մնան. վերջապէս նման շինութիւն մը բանակումի գեղեցիկ աշխատանքներէն մին կը համարուի։

Մաղթենք որ ապագայ բանակումներուն զայն իրագործուած տեսնենք։

Հ. ԴԵՐՁԱԿԵԱՆ

Ընդհ. պետը շուսանկարուած Վաղանսի գայլիկներուն մեծ մասին եւ տեղւոյն խմբապետներուն հետ, հաւաքոյթի մը ընթացքին։

ԵՐԷՑՆԵՐՈՒՆ ԲԱԺԻՆԸ

ԵՐԷՑՆԵՐՈՒՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

1928 թիւը հայ սկաուտութեան համար նոր տարեշրջան մը բացաւ։

1928ի աշնան Ֆ.Հ.Ս. Մութիւնը իրական իրաւունքներով մտաւ Միջազգային Սկաուտական կեդրոնը, և այս տարի մասնակցեցաւ Համաշխարհային ճէմպորիին։ Դեռ ճէմպորիէն առաջ մտադրութիւն կար կազմակերպել երէցներու խմբակ մը, որ ապագային իր շուրջ պիտի հաւաքէր հազարաւոր հայ երիտասարդներ։

Օգոստոսի 25ին բոլորը, ամենապզտիկ գայլուկէն մինչև առաջին սկաուտը ներկայ էին արշաւի մը, ուր ընդհ. պետ Գ. Մեծատուրեանի հրահանգով, Փարիզի և շրջանի բոլոր սկաուտները և գայլիկները մեծ շրջանակ մը կազմեցին։

Խօսք առաւ ընդհ. պետը.

«Սիրելի սկաուտներ եւ գայլիկներ. ճէմպորիէն վերջ առաջին արշաւն է ասիկա, և ճիշդ այս արշաւին Փարիզի խումբէն երկու վկայեալ և մէկ Արարատեան սկաուտ, երեքն ալ առաջնորդ, կը ձգեն իրենց խումբը և խմբակները մ՚ըտնելու և քալելու աւելի դժուարին և փշոտ ճանապարհով՝ երեց սկաուտի ճանապարհով։ Այլեւս երէցներուն կրնան դիմել թէ փոքրիկ գայլիկները և թէ սկաուտները. անոնք իրենց խումբին համար չէ որ կան այլ-

digitised by A.R.A.R.@

1) Հայ ժողովուրդին օգնութեան համար

2) Ֆ.Հ.Ս.Մ.ի համար։

3) Սկաուտական խումբերուն համար։

4) Գայլուկներուն համար։

5) Իրենց խումբին համար։

Ապա դիմելով երէցներուն.

«Սիրելի երէցներ. մեկի փոխարէն հինգ գործ ունեցաք։ Դժուար է ձեր ընելիքը, բայց յոյս ունիմ որ պիտի տապալէք և կործանէք ձեր ճանապարհին վրայ եղող բոլոր դժուարութիւնները։ Այսպէս ուժեղ կամքով պիտի հասնիք այն յաղթանակին, որուն գարերէ՝ ի վեր կ'սպասէ հայ ժողովուրդը։

«Յաջողութիւն ձեզ հայ երէցներ. խոստացէք և սեղմեցէք ձեր շարքերը։ Ուրեմն դէպի գործ»։

Երէքին ալ տալով սկաուտական նշանակը պետը յաջողութիւն մաղթեց ամէն մէկուն. Երէցները շրջանակի մէջ գտնուող բոլոր տղոց ձեռքերը սեղմեցին, և քալեցին դէպի անտառ, սկսելու համար երէց սկաուտի փշոտ ճանապարհը։

Յաջորդական հաւաքումներու ընթացքին երէցները մշակեցին հետեւեալ Ներքին Կանոնագիրը։

ԵՐԷՑ ՍԿԱՈՒՏԻ

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

1) Երէց Սկաուտը ամէն ջանք պիտի թափէ ՖՀՍՄ-ին օգնելու համար։

2) Մէկը ամենքի և ամենքը մէկի համար։

3) Բոլոր որոշումները կը տրուին քուէարկութեամբ (ձայներու բացարձակ մեծամասնութեամբ)։

4) Երէց սկաուտ կրնան ըլլալ 18էն վեր բոլոր հայ երիտասարդները, պայմանով որ չորս ամիս սկաուտութիւն ըրած ըլլան։

5) Ե.Ս. կը հնազանդի իր առաջնորդին և բոլոր տրուած հրամաններին։

6) Ե.Ս. 5 ֆր. կը վճարէ ամսական։

Այն ներքին կանոնագիրը նոյնութեամբ և միաձայնութեամբ ընդունուեցաւ երէց սկաուտներու կողմէ. Նոյն օրն իսկ հետեւեալ աշխատանքի բաժանումը կատարուեցաւ,

Յ. Պեհլիվեան- Ե.Ս.ի առաջնորդ։

Ե. Օտապաշեան- գանձապահ։

Վ. Զաւարեան- քարտուղար։

Այնպիսով 25 օգոստոսէն ի վեր Ֆ.Ս.Հ.Միութիւնը ունեցաւ իր երէց սկաուտները (**Rovers**), որոնք ապագային պիտի դեկավարեն հայ երիտասարդութիւնը։

Վիգէն ԶԱՒԱՐԵԱՆ



Հաճելի բանակում մը կատարելու համար

«Ի՛նչ հրաշալի բան է բանակումի երթալը»․ կը բացագանչեն շատ մը նորընծայ սկաուտներ առաջին բանակումէն վերադարձին։ Եւ անոնք իրաւունք ունին։

— Բնութեան մէջ ապրիլ, վրանի տակ քնանալ, առաւօտը զով և մաքուր օդին մէջ մարզանք ընել, շոկել, մոքրել և զարդարել բանակավայրը մէջ ընդ մէջ կատակներով, ուրախ ու զուարթ կերակուր պատրաստել, մէկ խօսքով՝ հնարաւորութիւնն ունենալ իր բոլոր կարիքները հոգալու լաւ ընկերներու հետ խաղալ ու մրցիլ, ատկէ աւելի ցանկալի բան կը ճանչնա՞յ զլլոցին կամ արհեստանոցին ծանր աշխատանքներէն վերջ, ֆիզիքապէս կատարեալ կերպով զօրանալու համար։

Յաճախ բանակումէն ելող սկաուտը կ'ունենայ ընտիր և հաւատարիմ ընկերներ, որոնք ապագային իր լաւագոյն բարեկամները պիտի դառնան կեանքի այլքներուն գլխագրաւելու համար։ Բանակումէն սկաուտը կը վերադառնայ առողջ, հոգին մաքուր և ճարպիկութիւնը զօրացած։

Ահա տանք են հաճելի բանակումի մը անգին արդիւնքները։ Բայց ամէն մարդ կանոնաւոր կերպով բանակելու կերպը չի գիտեր։ Կատարեալ բանակում մը ընելու համար անգլիացի սկաուտները «ոսկի կանոններ»ը (**Golden Rules**) ունին, որոնք ստորեւ կը թարգմանենք։

ՈՍԿԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1) Սեփական հողի վրայ բանակելու ժամանակ, կարելի եղածին չափ լաւ վարք ունեցէք, իսկ օտար հողի վրայ նոյնիսկ կարելի եղածէն աւելի լաւ։

2) Մի մոռնաք ձեզ հետ տանել լրիւ սպիտակեղէն փոխելու համար, բայց աւելորդ իրերով մի բեռնաւորուիք, որովհետեւ որչափ աւելի տանիք այնչափ աւելորդ նեղութիւն պիտի քաշէք լաւ պահպանելու համար զանոնք։

3) Եթէ երգելու համար ռ և է գործիքի պէտք ունիք, պիտի նկատէք որ ձայնմտու գործիք մը տանելը աւելի հեշտ է քան դաշնակ մը տանելը...։

4) Եթէ օդը խոնաւ է, ձեր կօշիկները և գուլպաները հանեցէք և սանտալներ հագէք. եթէ օդը չոր է զգուշացէք անտառի մէջ հրդեհ առաջ բերելէ։

digitised by A.R.A.R.@

5) Իւրաքանչիւրին համար օրական մէկ լոգանք բաւական է. իսկ նախաճաշէն առաջ, ոմանց համար պէտք եղածէն աւելի։

6) Երբ անկողնէն ելլէք, ամբողջ մարմիննիդ լուացէք. ձեր ձեռքերը լուացէք ճաշէն առաջ, ձեր ոտքերը՝ երկար պտոյտէ մը յետոյ։

7) Ինչպէս միշտ, բանակումի ժամանակումի ժամանակ ալ մի ունենաք սեւ սեւ եղունկներ. անթերի սկաուտի մը տեսքին փայլը կը կորսնցնեն աղտոտ եղունկները։

8) Ուշադրութիւն դարձուցէք որ ձեր խոհանոցի առարկաները, դանակ, պատառաքաղ, եայլն, և մասնաւորապէս ձեր խոհանոցի լաթերը կատարելապէս մաքուր ըլլան։ Ով չի ճանչնար այն հոտը, որ յաճախ կ՛ունենան այդ առարկաները երբ գէշ լուացուած են (ճենճի հոտ)։

9) Վրանները ճաշարաններ չեն։

10) Ձեր կերակուրները բաժնեցէք և կերէք կանոնաւոր և մաքուր կերպով։ Սկաուտները խոզերու պէս չեն ուտեր։

11) Ո և է այցելուի աչքին խակոյն կը զարնէ բանակավայրին աղտոտ ըլլալը։

12) Մի կարծէք որ ուրիշին անկողինը շինելը ձեզի համար ստորնութիւն է։

Վասիկ Տէր ԴԱՒԹԵԱՆ

«ՀԱՅ ԱՐԻ»ն զուտ սկաուտական անկախ ամսագիր մըն է և կը խմբագրուի սկաուտ խմբապետներէ կազմուած մարմինի մը կողմէ։

«ՀԱՅ ԱՐԻ»ն միութեան կապն է աշխարհի չորս կողմ ցրուած հայ երիտասարդութեան միջև։

«ՀԱՅ ԱՐԻ»ն սիրով կը հրատարակէ թղթակցութիւններ, որոնք կը հետաքրքրեն հայ պատանեկութիւնը։



ԺՊՏԻՆՔ

⊠ ⊠ ⊠

Օդը պայծառ էր։

Տէր և տիկին Շուկեր ուզեցին պտոյտ մը ընել իրենց քառատեղի ինքնաշարժով։

Քանի մը ոլոր մոլոր ճամբաներէ յետոյ, երբ ինքնաշարժը բաւական արագ կ'երթար յանկարծ ֆլախսոնի ձայն մը լըսուեցաւ։ Պ. Շուկեր մտածեց որ ետեւէն եկող ինքնաշարժն է որ կը բողոքէ իր դանդաղ ընթացքին դէմ։

Անիկա աւելի արագցուց իր ընթացքը, հասաւ ժամը 80 յետոյ 90 քլմ. արագութեամբ. բայց ֆլախսոնի ձայնը միշտ կը լսուէր։

Պ. Շուկեր բարկացաւ։

Հու՜յա, հու՜յա։

Բայց ետեւէն կը շարունակէր լսուիլ պօ՜ւը՜ը՜ու, պօ՜ւը՜ու...

Այս անգամ ինքնաշարժը ժամը 100 քլմ. արագութեամբ կը սուրար։ Սակայն աղմուկը միշտ ետեւէն կը լսուէր։

Դէ կնիկ, նայէ թէ ի՞նչ կայ ետեւնիս։

Մարդ Աստուծոյ հնգաձի ինքնաշարժ մըն է։

Այս միջոցին ժամը 125ի արագութեան մը կը մօտենար. պ. Շուկեր ճարահատ մեքենան կեցուց և վար իջաւ հասկնալու համար թէ ինչ կ'անցնի կը դառնայ։

Յանկարծ լսեց միւս ինքնաշարժի տէրը, որ կը պոռար.

«Ոճրագո՛րծ, մարդասպա՛ն, խե՞ւ ես ինչ ես. ժամ մըն է կը պոռամ որ ինքնաշարժս անզգուշաբար ձերինին կապուած է և չի քակուիր։

⊠ ⊠ ⊠

Երկու ընկերներ տարիներով զիրար չտեսնելէ վերջ կը հանդիպին։

Անոնցմէ մին կ'ուզէ այս հանդիպումը տօնել կէս կարկանդակով մը. կը գնէ կարկանդակ մը, զայն երկու անհաւասար մասերու կը բաժնէ և ընկերոջը ներկայացնելով կ'ըսէ.

Հրամմէ՛, առ մէկ կտորը։

Միւսը իհարկէ մեծ կտորը կը զատէ։ Այս տեսնելով հրամցնողը կ'ըսէ դժգոհ ձեւով մը։

Եթէ ես ըլլայի, առ ի քաղաքավարութիւն, փոքր կտորը կ'առնէի.

Բայց ջանիկս, փոքր կտորը քեզի ձգեցի արդէն, ալ ի՞նչ կ'ուզես. կ'ըսէ միւսը մեծ քաղաքավարութեամբ։

Ե. ՕՏԱՊԱՇԵԱՆ

Եթէ իւրաքանչիւր սկաուտ բաժանորդ մը գտնէ, «ՀԱՅ ԱՐԻ»ն կը հրատարակուի 24 էջերով։

digitised by A.R.A.R.@

Սկաուտական լուրեր

Միջազգային եղբայրութիւն

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսայի Իւնիօնիսթ սկաուտներու ընդհանուր պետ Կերէն Տէժարտէն Հոկտեմբեր ամսուան վերջը այցելեց Մարոքի սկաուտական խումբերուն և ամէն տեղ ջերմ ընդունելութիւն գտաւ։

* * *

Հինգշաբթի, Նոյեմբեր 21ին Բարիզի մէջ մարէշալ Լիօթէի նախագահութեամբ տեղի ունեցաւ սկաուտական համաժողով մը, որուն նիւթն էր «Ճէմպօրիին արդիւնքները». այս ժողովի ընթացքին խօսք առին Ֆրանսայի երեք սկաուտական միութեանց ներկայացուցիչները։

ԱՆԳԼԻԱ

Հոկտեմբեր 11ին Միջազգային գրասենեակի տնօրէն պ. Հիւպըրթ Մարթին Լոնտոնի ռատիօ-կայանէն խօսեցաւ նիւթ ունենալով «Մեծ Ճէմպօրին»։

* * *

Ժեներալ Կոտֆրուա Ֆօսէթ Ճէմպօրիի բանակավայրին պետը, ի վարձատրութիւն իր մատուցած ծառայութեանց, Պէյտըն Բաուլէն ստացաւ «արծաթեայ գայլ» պատուանշանը, որ ամենաբարձր սկաուտական պատուանշանն է։

ԳԵՐՄԱՆԻԱ

Վերջապէս գերմանական սկաուտական միութիւնը կազմուած է, և յոյս կայ որ շուտով ճանչցուի Միջազգային Գրասենեակէն։

Գերման սկաուտական շատ մը անկախ կազմակերպութիւններ կան, որոնցմէ և ոչ մէկը ճանչցուած է միջազգային գրասենեակէն։

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Հունգարներու ընդհանուր վարչութիւնը որոշած ըլլալով աշխարհի բոլոր սկաուտական միութեանց նշանակները ունենալ, գրած էր նաև Ֆրանսայի Հայ Սկաուտներու Միութեան, հայկական նշանակներ ունենալու համար։

Անոնց փափագին գոհացում տրուեցաւ Միջազգ. Պիւրոյի միջոցով.

ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկայի մէջ կան 850,000 սկաուտներ։ Ամերիկեան կազմակերպութեան վարչութիւնը սերտ յարաբերութիւններ կը մշակէ Ֆրանսայի Հայ Սկաուտական Միութեան հետ, սկսեալ անցեալ մեծ Ճէմպօրիէն։

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Միջազգային Գրասենեակը բոլոր սկաուտական Միութեանց ղրկած է բուէարկուած բանաձեւերը, որոնք մեծ բարեփոխումներ յառաջ պիտի բերեն սկաուտական շարժման մէջ։

* * *

Հրապարակ ելաւ նաև Ճէմպօրիի ձօնուած հոյակապ հատորը, որուն մէջ ճիշդ գովեստներ կան հայ արիներու մասին։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՆ ՈՒ ՀԱՅ ԱՐԻՆԵՐԸ

Նախորդ թիւով տուած էինք Լոնտոնի մամուլին կարծիքը հայ արիներու մասին։ Ներկայ թիւով կը համառօտենք գաւառական կարեւոր թերթերու արտայայտութիւնները այդ մասին։

Երբ յատուկ հրաւէրներով Լիւթըն, Տընսթէյպլ և Լէյթըն Պըզար քաղաքները այցելեցինք, տեղական թերթերը իրենց առաջին էջերը տրամադրած էին մեր տղոց անոնց նկարները դնելով։ Մեզ համար անկարելի է նոյնիսկ թուել այդ բոլոր յօդուածները և նկարները. անցողակի կերպով և համեստօրէն ըսենք որ ամէնն ալ անխտիր լեցուած էին անվերապահ գնահատանքի արտայայտութիւններով։

Յիշենք մանաւորապէս հետեւեալ թերթերը։

«Luton News» որ ամբողջ շաբաթ մը զբաղեցաւ հայ արիներով ու հետեւեցաւ անոնց յայտագրին։

«Leighton Buzzard Observer» որ կը գրէր. «Այն հայերը որոնց մենք հանդիպեցանք, կրթուած, բարեշնորհ և խելացի էին»։

«Beds Pictorial» որ բազմաթիւ նկարներ հրատարակեց հայ արիներէն։

«Dunstable Gazette» թերթը մանաւորաբար զբաղեցաւ մեր տղոց Տընսթապլ այցելութեամբ։ Ան մանրամասնօրէն կը խօսէր քաղաքապետին կողմէ մեր տղոց ըրուած ընդունելութեան, և տրուած թէյասեղանի մասին։ Հայ սկաուտները իրենց տպաւորութիւնները յայտնեցին նամակով մը, որ նոյնպէս հրատարակուեցաւ։

Փարիզ վերադարձին ընդհ. պետ Գ. Մեծատուրեան շնորհակալութեան նամակ մը գրած էր **Luton News** թերթին, որ հրատարակեց զայն։

* * *

Սկաուտները ամենէն աւելի զգածուեցան երբ 17 օգոստոսի կիրակին Լիւթընի եկեղեցիին մէջ պատարագ մը կատարուեցաւ ի յիշատակ հայ նահատակներուն։ Սկաուտները երգեցին «Հայր մեր»ը և Ն. Տէկիրմէնճեանը երգեց շարականներ։

Այս արարողութիւնը խոր տպաւորութիւն թողուց անգլիացւոց վրայ։

digitised by A.R.A.R.@

ՄԻՈՒԹՅԱՆ ❀ ԿՅԱՆՔԸ

ԸՆԴՀ. ՊԵՏԸ ԳԱՒԱՌ Կ'ԱՅՑԵԼԷ

Նախորդ ամսու սկիզբը Ընդհ. պետը այցելեց մեր գաւառի խումբերուն։

Նոյեմբեր մէկին Վալանս հասաւ և շատ գեղեցիկ ընդունելութիւն մը գտաւ տեղւոյն գայլուկներու և սկաուտներու կողմէ։

Յաջորդ օրը առաւօտեան Վալանսի սկաուտներու հաւաքավայրին մէջ տեղի ունեցան սկաուտական և գայլիկների հաւաքումներ։

Կէսօրին, Ընդհ. Պետին հետ Վալանսի սկաուտներն ու գայլիկները մեկնեցան Ռոման քաղաքը, տեղւոյն մասնաճիւղին այցելութեան։ Ընդհ. Պետը վաւերացուց տեղւոյն կազմը։

Նոյեմբեր երեքին Ընդհ. Պետը այցելեց Բրիվա քաղաքը, ուր կազմուեցաւ սկաուտական խումբ մը և գայլիկներ։ Տեղի ունեցաւ մեծ հաւաքոյթ մը որու ընթացքին Ընդհ. Պետը խօսեցաւ և խօսքը ուղղելով ծնողներուն, շեշտեց սկաուտական կրթութեան անհրաժեշտութիւնը հայ տղոց համար։ Հաւաքոյթը վերջացաւ մեծ խանդավառութեամբ։

Ընդհ. Պետը վերադարձաւ Վալանս, տուաւ բազմաթիւ այցելութիւններ, յետոյ դարձաւ Բարիզ։

ԲԱՐԻԶԻ ՇՐՋԱՆ

Բարիզի շրջանի սկաուտներու, գայլիկներու և երէցներու մեծ արշաւը տեղի ունեցաւ կիրակի Նոյեմբեր 17ին, Բլամառի անտառին մէջ։

Այս արշաւին կարելի էր տեսնել այն յառաջդիմութիւնները որ ըրած էին մեր խումբերը ճէմպորիէն ի վեր։

ՆՈՅԵՄԲԵՐ 24-Ի ԹԷՅԱՍԵՂԱՆԸ

Փարիզի շրջանի մեր սկաուտները գայլիկները և երէցները կազմակերպած էին հաւաքոյթ թէյասեղան մը, որ տեղի ունեցաւ անցեալ կիրակի, «Լա Տէմօքրասի»ի սրահներուն մէջ, որոնք սիրայօժար կերպով տրամադրուած էին պ. Մարք Սանիէի կողմէ։

Սրահը զարդարուած էր հայկական և սկաուտական դրշակներով. բոլոր խումբերը ցուցադրած էին իրենց ձեռական աշխատութիւնները։ Մանաւորապէս գեղեցիկ էր երէցներու կազմած բանակումի ցուցադրութիւնը։

Սրահը լեցուած էր ծնողներու և սկաուտներու բազմութեամբ մը։ Հաւաքոյթը սկսաւ ժամը 3ին «Մեր հայրենիք» երգով, որ երգուեցաւ սկաուտներու կողմէ.

Յետոյ խօսք առաւ Ընդհ. Պետը, որ ուղղելով իր խօսքերը ծնողներուն, որ ներկայ էին հոն, շնորհակալութիւն յայտնեց անոնց ցոյց տուած համակրանքին և քաջալերանքին համար։ «Մեր սկաուտ ծնողքները լաւագոյն պաշտպաններն են մեր միութեան վստահ եղէք որ ձեր տղաքը կը կրթենք համաձայն ձեր փափագին»։

Յետոյ Բարիզի Ա. և Բ. խումբերը ինքնատիպ փոքրիկ ներկայացումով մը զուարճացուցին ներկաները։ Երէցներու և գայլիկներու յայտագիրը ջերմօրէն ծափահարուեցաւ։

Հանդէսին ներկայ էր պ. Ա. Խաչիսեան որ խօսեցաւ Ֆ. Հ. Ս. Միութիւնը հովանաւորող մարմնոյն կողմէ. պարզեց մեր տղոց կատարած դերը ճէմպորիի ընթացքին և անգամ մը ևս թելադրեց հասարակութեան օգնել հայ նոր սերունդին ամէն կերպով։

«Հայ Արի»ի բարեկամներու կողմէ խօսեցաւ պ. Ս. Գարակէօզեան, որ բացատրեց թէ ինչու ինք «Հայ Արի»ն բարեկամ է։ Խօսք առաւ նաև Թ. Մեճատուրեան, Ծեր Սկաուտը, որ գեղեցիկ խօսքերով յայտնեց թէ հայ սկաուտ ծնողները պէտք է որ քաջալերեն իրենց զաւակ սկաուտները։ Գրաւոր ուղերձներ ղրկած էին պ. Կարօ Սասունի և Տօքթ. Լ. Գրիգորեան, որոնք վերջի պահուն չէին կարողացած ներկայ ըլլալ։

Սկաուտները ճոխ թէյասեղանով մը հիւրասիրեցին իրենց ծնողները. երեկոն շատ զուարթ անցաւ։ Հաւաքոյթին ներկայ էին անգլիական, յունական և լեհական սկաուտական խումբերը, ինչպէս նաև պուլկար խմբապետ մը, ֆրանսացի և օտար բակեկամներ, ու հայ ազգային անձնաւորութիւններ։

Հանդէսը փակուեցաւ և հայ ծնողները մեկնեցան շնորհակալութեան խօսքերով. «Տղաք վստահ եղէք մեր շարունակական աջակցութեանց և շարունակեցէք այսպէս»։

Այս հաւաքոյթը անգամ մը ևս վերստեղծեց մեր սկաուտական մթնոլորտը, որը այնքար կը գնահատուի մեր բոլոր բարեկամներուն կողմէ։

Յունվար 26ի հանդէսը

Յառաջիկայ տարուան յունվար 26ին տեղի կ'ունենայ Բարիզի շրջանի սկաուտներու և գայլիկներու մեծ հանդէսը։ Բոլոր խումբերը կը պատրաստուին արդէն։ Ինչպէս նախորդ տարիները, վստահ ենք որ մեր բարեկամները անգամ մը ևս պիտի քաջալերեն մեր տղաքը իրենց ներկայութեամբ։

«ՀԱՅ ԱՐԻԻ» բարեկամները

«Հայ Արիի բարեկամներ» պիտի հոչակուին այն հայրենակիցները, որոնք կը տարածեն ՀԱՅ ԱՐԻ-Ն, նոր բաժանորդներ գտնելով։

ԸՆԹԵՐՑՈՂ,

Պիտի չուզէի՞ր ՀԱՅ ԱՐԻԻ ԲԱՐԵԿԱՄ հոչակուիլ։

digitised by A.R.A.R.@

ՊԱՏՇՏՕՆԱԿԱՆ

ՖՐԱՆՍ. ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԴԻՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Ֆրանսայի հայ սկաուտներու Միութեան վաւերացուած խմբապետական կազմերը Գործադիր Խորհուրդին կողմէ։

ԲԱՐԻԶ *Ա. խումբ* Հրանդ Դերձակեան խմբապետ.
7 Rue Tournon Paris.

Բ. խումբ Արմիկ Զամնլեան խմբապետ
21 Rue Haussaire Enghien-les-Bains.

Գայլիկներ Օր. Վ. Բէկլատեան խմբապետուհի
7 rue Desnouettes Paris 15e.

Օր. Հ. Բրիկեան փոխ-խմբապետուհի
10 Ave. de Ceinture Enghien-les-Bains

Երէցներ Յակոբ Պեռիկեան Երէց-առաջնորդ
4 Ave. St. Roman Villejuif (Seine)

ՎԱԼԱՆՍ *Սկաուտներ* Պարոյր Պայեան խմբապետ
6 Rue Dauphine Valence (Drôme)

Գայլիկներ Օր. Մ. Տուրպաղ խմբապետուհի
4 Rue Bouffier Valence (Drôme)

ՄԱՐՍԷՅԼ *Սկաուտներ* Բ. Գալէզեան պատասխանատու-վարիչ
49 Rue Nationale Marseille

ԲՐԻՎԱ *Սկաուտներ* Զաւէն Բաղուճեան պատ. վարիչ
Chalamond Privas (Ardèche).

Գայլիկներ Օր. Զ. Բաղուճեան խմբապետուհի
Chalamond Privas (Ardèche)

ՌՕՄԱՆ *Գայլիկներ* Տիկին Պիլպեան խմբապետուհի
15 Rue de la Batie Romans (Ardèche)

Այս խմբապետները նշանակուած են Գործադիր Խորհուրդին կողմէ. և Տեղերուն վրայ անոնց պէտք է դիմել արձանագրուելու. եւ ամէն կարգի տեղեկութիւններ ստանալու համար.

Ստացանք

«Scouting» *Ամսագիր Ամերիկայի սկաուտներու. Նոյեմբերի Թիւը։*

«ՍԻԱՄԻ ՍԿԱՈՒՏ» *Օրկան Սիամի սկաուտներու. հոկտեմբերի Թիւը։*

«ԱԶԱՏԱՄԱՐՏ» *Շաբաթաթերթ; Թիւ 24 և 25. հասցէ.* **45 Quai d'Iéna. Chelles (S. & M.)**

«ԵՐԿՈՒՆՔ» *Ամսագիր Զ. Ե. Ռ. Միութեան. Թիւ 7. հասցէ.* **M. Kurkdjian 247 Bd. Voltaire Paris.**

«ԲՈՒԺԱՆՔ» *Առողջապահական գիտական և ընկերային ամսագիր Թիւ 11 հասցէ.* **Dr. Krikorian 126 Fbg. St. Denis Paris.**

« Le Foyer » *Երկշաբաթաթերթ* **208bis rue Lafayette Paris.** *հոկտեմբերի և նոյեմբերի Թիւերը։*

«ՀՆՉԱԿԵԱՆ ՄԱՄՈՒՎ» *Օրկան Ս. Դ. Հ. կուսակց. Գործ. Յանձնախումբի* **48 Bd. de la Chapelle Paris** *Թիւ 1 և 2։*

digitised by A.R.A.R.@

Le Gérant NERSES -:- Imprimerie G. NERCES 65, Rue Pascal PARIS (13e)

digitised by A.R.A.R.@